

Տարեկան գինը 7 բուրդ, կես տարվանը 4 բուրդ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում:

Օտարաբաղադրայիք գրվում են ուղղակի

Тифлис. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2

(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄԱՍԿ“

Ծախվում է առանձին համարներով, հատը 7 կոպէկով, բացի խմբագրատանը, հետեւեալ խանութներում՝ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ խանութի մա- գաղկնում (Ծաբուրովի տանը), Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆԻ գրափաճատանոցում (կամուրջի մօտ) ԳՐԻԳՈՐԻ մագաղկնում (Միրզոեփի տանը, Երևանեան հրապարակի վրա) և ՍՍՐԱՅԱՆԻ ծխախոտի խանութում (Արաքլեփի տանը):

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Նոր գաղթած հայերը.— Ն երբին տեսու- թիւն: Պատերազմական բռնիք: Նամակ համա- խուց: Նամակ վարդապետից: Ներքին լու- թեր: Արտաքին տեսութիւն: Յրանախայի բնաբնութիւնները: Քաղաքային: Մի նոր գրվածք արեւելեան խնդրի մասին: Արտաքին լուրեր: Խառն լուրեր: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:

ՆՈՐ ԳԱՂԹԱԾ ՀԱՅԵՐԸ

Երևանի նահանգից ստացած տեղեկութիւններին նայելով գաղ- թականների թիւը թիւքբաց Հա- յաստանից այնքան մեծ է եղել, ինչքան սկզբից կարծում էին: Յայտնվում է որ ընդամենը թիւք- քաց Հայաստանից անցել են Ան- զրկովկաս մօտ 2000 ընտանիք, և այդ թիւի մէջն էլ բոլորը հայեր չեն, այլ կան մօտ 80 տուն յոյ- ներ, որոնք անցան Ալեքսանդրա- պոլի գաւառը և 500 ընտանիքից աւելի հայերին բարեկամ եղիգի քուրդեր, որոնց սկզբից թէ վար- չութիւնը և թէ ժողովուրդը հա- յերի տեղ ընդունեցին: Բացի սո- րանից գաղթականներից շատերը Երևանեան նահանգի մի գաւառից միւս գաւառ շրջելով, վարչութեան կողմից ուղարկված հաշուղ պաշ- տօնեաները սխալմամբ մի քանի անգամ մի և նոյն անձներին հաշ- լեցին: Այսպիսով գաղթական- ների թիւը աւելի մեծ էր երևում: Գաղթականների մեծ մասը ան- ցան մեր սահմանները իրանց հետ տուար, կայք, սայլեր բերելով, թէև նրանցից մօտ 300 տուն ոչինչ չունեն, ամենաթշուառ զը- րութեան մէջն են, որովհետև երբ վանի և Մուշի կողմերից եկած վայրենի քուրդերը նրանց վրա յարձակվեցան, նրանք ժամանակ չունեցան իրանց կայքից մի բան ազատելու, այլ միայն կարողացան ազատել իրանց անձը:

Մեզ յայտնի է արդեօք գաղ- թականները պատերազմը վերջա- նալուն պէս կուղենան մեալ Ան- զրկովկասում, կամ կը կամենան նորից իրանց հայրենիքը յետ գալ: Բայց եթէ այդ գաղթականները, կամ գոնե նրանցից մի մաս յայ- տնել են իրանց ցանկութիւնը մեալ Ռուսաստանի սահմանե- րում, պետք է այժմից արդէն մը- տածել թէ որտեղ աւելի յարմար կը լինէր բնակեցնել նրանց: Ռուս լրագրողներից ոմանք ա- ռաջարկութիւն են արել բնակեց- նել գաղթած հայերին Արևադիա- յում, որի հողերը այժմ ազատ են, որովհետև արևադեբը գաղ- թեցին Փոքր-Ասիա: Բայց այդ տեսակ առաջարկութեանը համա- ձայնել անկարելի է, որովհետև հայերին Արևադիայում բնակեց- նել, կը նշանակէր դատապարտել նրանց հաստատ մահվան այն շրջ և ճահճային կլիմայում: Այդ միտքը առաջարկած էր «Съвер- ный Вѣстникъ» լրագիրը, որ իր խօսքը վերջացնում է ասելով «Եւ այդպիսով մենք կունենայինք Ար- իսադիայում մի հաւատարիմ և աշխատասէր ազգաբնակ- թիւն:» Այդ կողմից ռուս լրագրի միտքը բոլորովին ճիշդ է՝ որտեղ հայը բնակվում է, նա կազմում է հաւատարիմ և աշխատասէր ազ- գաբնակութիւն: Բայց նոյն իսկ այն պատճառով, որ այդ հաւա- տարիմ և աշխատասէր ազգաբնա- կութիւնը թանգ պէտք է լինի ամենի համար, ով որ ցանկանում է Անզրկովկասի անտեսական ա- ռաջարկութիւնը, ով որ համոզ- վել է թէ այդ առաջարկութեան զլուաւոր արգելքը մեր մահմե- տական ազգաբնակութիւնն է, — պէտք է աշխատել բնակեցնել հա- յերին որտեղ նոքա կարող են ապրել, զարգանալ, բազմանալ, անտեսապէս հարստանալ, և օգ- տաւէտ լինել, և ոչ թէ այնպիսի տեղեր, որտեղ նոքա ճանճերի պէս կը մեռնեն: Երևակայեցէք ձեզ որ այդ ութ թէ ինչ հարիւր տուն գաղթականներին կուղենայինք բը- նակեցնել կամ Արևադիայում և կամ Կուբանի վեճակում... Ար- իսադիայում ճահճային օդից նոքա

մինչև վերջին մարդ կը մեռնէին, իսկ Կուբանի վեճակում թէև ճա- հճներ չը կան, բայց դուցէ այդ վեճակի և թերքեան գաւառի, այդ բոլորովին տափարակ երկիրների ցամաքային (կօնտինէնտալ) խիստ կլիման Արևադիայի կլիմայից էլ աւելի վնասակար ներգործութիւն կունենար նոր գաղթած լեւնա- ընակ հայաստանցիների վրա... Առհասարակ ամեն ազգի հա- մար գաղթականութիւնը էժան է նստում՝ գաղթականների առաջին և երկրորդ սերունդը մեծ մասամբ զոհ է լինում այդ տեսակ տեղա- փոխութիւնների և միայն երրորդ սերունդը սկսում է ընտելանալ իր նոր հայրենիքին: Գաղթականու- թեան գործի հետ պէտք է շատ զգուշ վարվել, պէտք է աշխատել գաղթածներին բնակեցնել այն- պիսի երկրում, որի զիրքը, հողը, ջրերը և կլիման որչափ կարելի է նման լինեն թողված հայրենիքին, և ոչ թէ Արաքլեա կամ Հին Բայազետ շրջապատող լեռնաբնակ գիւղերից յանկարծ տեղափոխել ժողովուրդը ճահճային Արևադիա, կամ չոր ու ցամաք, տափարակ, ցուրտ և անապատ Կուբանի վի- ճակը... Լրդըրումի և Արաքլեայի մէջ թէ զիրքի, թէ օդի, և թէ առ- հասարակ կլիմայի կողմից անկաս- կած աւելի նմանութիւն կայ, քան թէ Արաքլեայի կողմերի ու Ար- իսադիայի կամ Կուբանի զիրքի և կլիմայի մէջ, — բայց այնու ամե- նայնիւ ամենքը գիտեն թէ որքան դժուար էր Լրդըրումից եկած ա- ռաջին սերունդներին ընտելանալ Արաքլեայի կլիմային: Գաղթած- ների առաջին սերունդը շատ մարդ կորցրեց, և մի ժամանակ դա- նապան տկարութիւններ և մահ- կանացութիւնը այնքան ստատիկ էին տիրապետում գաղթական- ների մէջ, որ նոքա ցանկութիւն էին յայտնում նորից վերադառ- նալ Լրդըրում, և եթէ չենք սխալ- վում նրանցից մի մաս ճշմարիտ էլ վերադարձաւ իր հայրենիքը: Միայն երկրորդ, կամ երրորդ սե- րունդը սկսեց ընտելանալ նոր հայրենիքի կլիմային:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Նորին Կայսերական Բարձրութիւն Կով- կասեան զօրքի Կլեաւոր Հրամանատարը պաշ- տօնապէս հեռագրում է Ղ. արայալից, հոկտեմբերի 4-ից, հետեւեալ: Այս էր հոկ- տեմբերի 2-ի և 3-ի ճակատամարտերի ընդ- հանուր ընթացքը. զինեալ Կալարիվի կօ- լոնը վեր առնելով հոկտեմբերի 2-ին Օրթիկ բարձրութիւնները, յետ միջց թիւքերին Արաքի և Վիլզիկի կողմը: Որովհետև զո- րանով թշնամական զօրքի հետից մեր զօր- քերը պոյոյտ արին, այդ պատճառով հոկ- տեմբերի 3-ին նշանակվեցաւ ընդհանուր ատակա (յարձակում) Մուխթար-փաշայի զօրքի դէմ, որի ամրացած զիւրքերի բանակին Սվիլար սարն էր: Ժամը 6-ին առաւօտեան մեր զօրքերը սկսեցին ընդհանուր յարձա- կում, նախապէս Սվիլար սարը ուժակոծե- լով: Պենեալ Պէյման յարձակվելով իր զօր- քով Սվիլարի վրա, կռուով վեր առաւ և տիրապետեց այդ զիւրքը: Այդ կետը վերջ- նելուց յետոյ Մուխթար-փաշայի զօրքը կը- տրվեցաւ երկու մասի վրա: Զօրքի մի մասը ճանապարհ ընկնելով դէպի Արաք, և հան- զիւրքով Կալարիվ և Պէյման զինեալների զօրքերին, ժամը 5-ին երեկոյեան բոլորովին ջարդվեցաւ և ցրվեցաւ, կորցնելով բազմա- թիւ սպանված և վիրաւորված մարդիկ, մի քանի հազար զերիներ և 4 թնդանթներ: Մի և նոյն ժամանակ կարված զօրքի այն մասը որ մնաց աջ թեւի վրա, երեք զիւր- զեայի քանակութեամբ, յետ միջցաւ Արա- ջաղաղ բարձրութիւններից և շրջապատված լինելով ամեն կողմից մեր զօրքերով, և մեծ կորուստներ կրելով, ժամը 8-ին երեկոյեան ստիպվեցաւ մեր զօրքերին անձնատուր լը- նել: Բազմաթիւ զերիներ և եօթ փաշաներ ընկան մեր ձեռքը: Մենք վեր առանք 32 թնդանթներ և ահագին քանակութիւն զե- նուորական պաշարի: Նոյն Մուխթար-փաշա (երեւ զանկելով զօրքի ձախ թեւի վրա) փա- խաւ Արաք: Մեր կորուստները համեմատե- լով անշան են: «Միջազգային հեռագրական ընկերութիւնը» կարծում է որ Իզմայիլ-փա- շան, որ անդադար մօտենում էր Տէր-Ղուկա- սով զօրքին, ամրացնելով իր զիւրքերը, այժմ իմանալով Մուխթար-փաշայի Արաքի վրա յետ քաշվելը (հեռագրերը հոկտեմբերի 2-ին և 3-ին եղած ճակատամարտերից առաջ էր) երեւ ստիպված կը լինի յետ քաշվել Քար- վանտարայի բարձրութիւններից՝ այն կողմ: Իսկ այժմ, իբր Մուխթար-փաշան բոլորովին ջարդված է, աւելի էլ հաւանականութիւն կայ, որ Իզմայիլ-փաշայի զօրքը կը շտապէ հեռանալ, և կուղենով կամ դէպի Սորան- լուղի սարերը, կամ կը կանգնի Վանի ճա- նապարհի վրա:

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

Սեպտեմբերի 25-ին

Վերջին ժամանակներս Շամախին մի այն- պիսի սահմանափակ զիւրք է բռնած, որտե- ղից լուրեր, կամ տեղեկութիւններ հազորդե- լու դժուարութիւնը բաւական զգալի է դառ- նում: Այս քաղաքը, որ մի ժամանակ օրինա- կելի էր Կովկասեան շատ քաղաքներից, որը իր ծաղկած ներքին վաճառականութեամբ, շատ

Գ. Ա.

օտարաբաղադրացիք էր գրաւում զէպի ինքը, ուր հասարակական կեանքը իր փոքր ի շատէ գարգացած դրութեան մէջ էր գտնուում, և ուր լուսաւորութիւնը, թէև կաղն ի կաղ, սակայն զգալի կերպով առաջ էր բնութանում և վերջապէս որը մի քանի տարի սորանից առաջ իր բազմամարդութեամբ յայտնի էր կողմաւ մէջ որպէս երկրորդ քաղաք, այժմ լոկ մի աւերակ, միայն քարերի մի կողմ է ներկայացնում մեր աչքի առաջ: Այնտեղ ուր եօթ կամ ութ տարի առաջ սրբատաշ քարերով փառաւոր երկարակեայ կամ երեք յարկեայ տներն էին բարձրանում, այժմ նոցա տեղ յաջորդած են միայն քարերի, հողի կողմերը: Աւերիչ երկրաշարժը շատ չուտով զգալ տվաւ մեր քաղաքին իր գառն հետեանքը: Ստարականը առաջին անգամ ոտ կոխելով այս քաղաքը պիտի կարծէ թէ թշնամու կատաղի հրոսակներից սրբված կամ սոսկալի ժանտախտից նոր ամայացած մի քաղաք է մանուս: Թէ փողոցում և թէ չուկաներում անկարելի է հինգ կամ տասը մարդ միասին նկատել: Փողոցները դատարկացած մարդկերանից, լինն են անմաքորութիւններով: Կրթականիւր փողոցում իւրաքանչիւր տան հանգէպ դարձած են երկրաշարժից պատճառով աւերակների այն յիշատակները, որոնք անդադար յիշեցնում են թէ ինչպիսի ցաւալի հարուածի է ենթարկված անբաղտ քաղաքը: Բնակիչները մեծ մասամբ ցրված են ուրիշ քաղաքներ, այնպէս որ Շամախում, ուր մի ժամանակ հազարի մօտ հայ գերդաստան էր գտնվում, այսօր հազիւ թէ նորա կենս անգամ գտնվի, մնացեալները ցրված են և անդադար ցրվում են զանազան քաղաքներ, ինչպէս Բագու, Ղուբա, Վերքէն, Շուրա և այլ տեղեր, չը կայ այսօր կասկական օսանմանում մի քաղաք, ուր չը գտնվէին մի քանի չամախեցի հայ ընտանիքներ: Վեց ամբողջ տարիներ է ահա, սկսած 1872 թվականի զարհուրելի երկրաշարժից յետոյ, որ համարեա հիմնայնապէս արաւ մեր քաղաքը, զաղթականութեան ոգին բուռ դրաւ սորա զաւակները մէջ որոնք այսօր տարվալ միջոցում անդադար զաղթում են վերոյիշեալ քաղաքները և գլխաւորապէս Բագու, ուր վաճառականութիւնը ծաղկած լինելով, գրաւում է զէպի ինքը շատ չամախեցի գերդաստաններ, որոնք թէ չը քաւորութենից, և թէ առեւտրի նուազումից, ստիպված են այնտեղ հազալ իրանց ապրուստը: Չը նայելով որ Բագուի օրը համեմատութեամբ այսօրու հետ շատ անառողջարար է չամախեցի գերդաստանի համար, չը նայելով այդ գլխաւոր արգելաւիժ հանգամանքին, էլի այսօր Բագուի մէջ գտնվում են երկու հարիւրի մօտ չամախեցի հայ ընտանիքներ: Գեու ևս չը հաշուելով այն երկուստարդները՝ որոնք իրանց տները ունենալով Շամախում, իրանք պարապվում են այնտեղ արհեստով կամ վաճառականութեամբ: Մենք չենք կարող ամենայն պարսպել այն չամախեցի հայերին, որոնք թողնելով իրանց քաղաքը աւերակ դրութեան մէջ, ցրված են ուրիշ քաղաքներ: Ինչպէս չը զաղթէ այն չամախեցին, որը այսօր իր հազարներն էր միասն, տներ կառուցանում, որոնց մէջ իր ընտանեաց հետ ապրելու քաղցր յոյսն էր գնում, վաղը արտաւալի աշխուղ պիտի նկատել իր յոյսերի հիմնայնապէս կործանումը, իր հազարները մի քաղաքի մէջ անպայտանալը, եր սեփական տան աւերակների տակից պիտի ստիպվէր դուրս քաշել իր կնիւղ, իր զաւակի արխաւթաթախ ապաւանակված դիակը: Աչքի առաջ ունենալով այդ ցուալի իրողութիւնները, և մանաւանդ այսպիսի հանգամանքներին յաջորդող զանազան դժբաղդութիւնները, ինչպէս առեւտրի անկումն, չըբարութիւնն և չըբաւարարութեան հետեւանքի եղող զանազան տարաբախտութիւններ և այլն, հասկանալի է որ չամախեցիք ձեռք վեր առան իրանց քաղաքից: Կոթախտաբար զաղթականութեան ցաւալի հետեանքն էլ շուտով երևան ելաւ: մի քանի կօպիտ անձինք յարմար առիթ գտնելով այդ հանգամանքից, սկսեցին կողոպտել, յափշտակել մնացեալների էլ սրբազան իրաւունքը: Խօսքը մեր ուսումնաբաններին և առաւելապէս արական սեռի զարդեր վրա է, որը ներկայ քաղաքի կարելի է ասել որ ճգնաժամի վերջին կէտումն է գտնվում, չնորհիւ մի քանի ազգասէր պարոնների որոնք սովոր են երբեք իրանց ասածը յետ չը դարձնելու, սովոր են կեղծաւորվելու: Այդ ուսումնաբանը որ մի ժամանակ բոլորովին ապահովացրած էր իրան նիւթականապէս, այժմ հասարեա փակվելու դողոցի մէջ է գտնվում, ուսուցչի համար կարեւորութիւնը զգալի է սակայն ուսուցչին վարձատրելու կարողութիւն չունէ: Վերջին ժամանակներս, մինչդեռ Բարձրագոյն հրամանով

միջոցա պիտի ժողովէր այստեղից, տեղւոյս հասարակութիւնը կամենալով հետու միջոցիայի համար հոգալիք ծախքից, ստիպում է ուսումնաբանի զանազան հարցար մանէթ զոնկ ուսումնաբանի փողից միջոցիայի ծախքը հոգալու, խոտախալով որ էլի հասարակութիւնը իր միջոց ժողովելով կը լրացնէ ուսումնաբանի փողը: Կանձապահը թէ և առաջին անգամ ընդդիմադրում է այս մտադրութեան, սակայն վերջապէս ստիպվում է տեղի տալ նոցա պահանջման, իսկ երբ խնդիրը գալիս է կրկին փողը յետ դարձնելու համար, հազիւ հազ կարողանում են միայն հինգ հարիւր մանէթ ժողովել, իսկ մնացեալ հինգ հարիւրը մինչև այժմ էլ կորչում է անդարձ: Մի և նոյն և գուցէ նորա նից էլ վատ դրութեան մէջ պիտի լինէր և տեղւոյս իզական զարդը, սակայն մենք ճշմարտութիւնը բոլորովին ծածկած կը լինէինք, եթէ պարզօրէն չը խոտովանէինք որ այս ուսումնաբանը, եթէ մինչև այժմ գոյութիւն ունէ այն ևս պարտական է իր ծրարան և ազգասէր հոգաբարձուներից մէկին, — Գ. Յովհաննէս խալաբեանցին, որը մի և նոյն ժամանակ է և զանազան նոյն զարդի: Այս պարտնը չը նայելով որ զանազան արգելաւիժ հանգամանքներ միշտ խոչնդոտ են հանդիսացած նորա քաղցրին, սակայն վեց տարի է ի վեր է որ անձնուէր կերպով աշխատում է այս ուսումնաբանի առաջադիմութեան համար, համարեա իւրաքանչիւր օր աչքիդրով ուսումնաբանը և ինքը իր ձեռքով հոգալով ուսումնաբանի կարեւոր պիտոյքները, մինչդեռ միւս հոգաբարձուք տարիներով անգամ չեն աչքիդրում ուսումնաբանը, միայն անուամբ գիտեն որ, այս, կայ մի ուսումնաբան Շամախում ուր իրանց որդիքը գնում են ուսանելու, բայց թէ ինչ դրութեան մէջ է գտնվում ուսումնաբանը՝ այդ մասին ոչ ոք տեղեկութիւն չունէ: Իզական զարդը թէ և նիւթականապէս շատ ստոր էր արականից, սակայն այժմ կարող ենք ասել որ այժմ խալաբեանցի շնորհիւ նորանից նախանձիկ դրութեան մէջ է գտնվում: մի հաստատ ապացոյց այժմ զանազան հոգաբարձութեան այն է որ մինչդեռ արական սեռի զրգարոցի փողերից հազարներով են կլանած, իզական սեռի զարդից և մի կօպէլը մինչև այժմ չէ անյայտացած և ոչ մէկի վրա: Մենք չենք կարող չը յայտնել մեր շնորհակալութիւնը վերոյիշեալ պարոնին իր անշահասէր և օգտաւէտ ծառայութեան համար, սակայն ինչպէս լսում ենք այդ պարոնը ձանձրացած իրան չըբաւարարող նեղութիւններից, մտադիր է շուտով հրաժարվել իր պաշտօնից: մենք թէ և չենք կարող արգելք հանդիսանալ նորա հրաժարման, սակայն ցանկալի էր որ այժմ խալաբեանցը չը կատարէր իր մտադրութիւնը և այսպիսով չը ստիպէր իրան պատճառ դառնալ ուսումնաբանի շուտապիթ կործանման:

Թողնելով ուսումնաբանի հարցը դառնալք քաղաքիս միւս կարեւոր հարցերին: Մի ամբողջ տարի է ահա որ այստեղ վարակված է ծաղիկի հիւանդութիւնը և մեծ զոհեր է անում թէ քաղաքում և թէ չըբաղալ գիւղօրայքում, որին ենթարկվում են գլխաւորապէս փոքրիկ մանուկները, և մինչև անգամ հասակաւոր անձինք: Եր չէ անցնում որ մի կամ երկու երեխայ զոհ չը դառնար այս ցաւին, չը կայ մի տուն այս քաղաքում ուր ներս մտած չը լինի ծաղկացաւը, և զարմանալին այն է որ տեղացիք փոխանակ զգուշանալու, փոխանակ առաջն առնելու, կարծես կամաւորապէս իրանք են վազում նորա գիրկը: մի և նոյն տան մէջ մի փոքրիկ սեռեակում, ուր ընկած է ծաղկացաւից բռնված հիւանդը, մի և նոյն սեռեակում է թնփոված են և ընտանիքի միւս անդամները՝ թէ երեսպէք և թէ հասակաւոր անձինք, քնում են հիւանդի հետ միասին, ծծելով մի և նոյն վարակված օդը որը արտաշնչում է հիւանդը, ուսում և խում են հիւանդի հետ մի և նոյն ամանից: Ի հարկէ աւելորդ է ասել որ շատ կարճ միջոցում հիւանդութիւնը փոխադրվում է միւսների վրա, և այսպէս ահա ամբողջ տարի է որ օր ըստ օրէ աւելի և աւելի տարածվելով դարձել է այժմ ընդհանրական և մեծ զոհեր է անում: և ամենից ցաւալին այն է որ այդ հիւանդութեան զոհ եղողներից շատերը գլխաւորապէս ոչ թէ ծագկացաւից են կորչում, այլ իրանց տղէտ տէրերի ըմբռնելով մի հասակացող, գիտուն բժշկի ենթարկվելու, ընկնում են տեղւոյս դաւաք — բժիշկների ձեռքը որոնք բժշկականութեան հոսն անգամ առած չը լինելով, վարվում են հիւանդի հետ այնպէս, ինչպէս իրանց հաստ գլուխն է հրամայում, լցնելով խեղճ հիւանդի բողաքը (ինչպիսի հիւանդ էլ լինի) իրանց բժշկականու-

թեան հիւք եղող բաղամի և զր և անխնայօրէն միւլելով իրանց սուր նաշտարները և արխաւթաւ սուկիները հիւանդի ամբողջ մարմնի վրա: Թէ ինչքան անմեղների մահվան պատճառն դառնում այդ արխաւթաբուները, մարդ ակամայ զարհուրում է մտածելով: Կը յուսանք որ կառավարութիւնը արգելք կը յարուցանէ այդ ինքնախօշ բժիշկների դէմ: Նամակս երկարելու պատճառաւ այդ առթիւ կը խօսեմ մի այլ անգամ:

Ա. Զախարեանց

ՆԱԽԱԿ ՎԱԿԱՐՇԱՊԱՍԻՅ

Կեպտեմբեր 29-ին

Ինչպէս ամեն տարի նոյնպէս և այս անգամ ամսին 24-ին Ա. Վերքի տօնի օրը կատարվեցաւ Վեհափառ Կաթողիկոսի անուանական յիշատակութեան հանդէսը համեստ, բայց վայելուչ կերպով: Գոհացողական մաղթանքից յետոյ խուռն բազմութիւնը, միաբանական ուխտը հեմարանի աշակերտները իրանց ուսուցիչներով, վաղարշապատի արական և իզական զարդերի աշակերտները իրանց վարժապետներով և վարժուհիներով դիմեցին Նորին Ա. Օծուկեան աջը համբուրելու: Կղան ճառատացութիւններ թէ հեմարանի և թէ վաղարշապատի զարդերի աշակերտների կողմից: Օրիորդական զարդի սանուհիները իրանց ձեռագործ մի փոքրիկ բարձրաւրեցիկ Նորին Վեհափառութեան իբրեւ երեսպալիք, իսկ Նորին Վեհափառութիւնը, ինչպէս ասում են, բարեհաճել է նուիրել մի հարիւր յիսուս բուրք:

Հանդիսաւոր պատարագը աւարտվելուց յետոյ խուռն բազմութիւնը եկեղեցական խմբի հետ դիմեց զէպի ձեռնադրան՝ ուր պիտի կատարվէր նորա բացման երրորդ տարեդարձի հանդէսը: Զեմարանի զաւթում ամբիոնի վերադրում էր Վեհ. Կաթողիկոսի զահաւորակը: Սկսեա հոգեհանգիստ հեմարանի հիմնադիր Վեհ. Հայրապետի ծնողաց համար, որից յետոյ Նորին Ա. Օծուկեան սկսեց ատենաբանել, որով բացատրեց թէ այն ազգերը որոնք ունեն յիշատակարաններ, կարող են կօպել պատմական ազգ. իսկ պատմական ազգ լինելը այն նշանակութիւնն ունի, որ նա կարող է մարդկութեան համակրութիւնը գրաւել և իր գոյութեան համար երաշխաւորութիւններ պահանջել: Հայոց ազգը թէպէտ այժմ ընկած է, բայց այն անհամար աւերակները, որ պատահում են իւրաքանչիւր մարդու, յիշատակարաններ են, որոնցից հեշտ կարելի է եղբակացնել որ հայերը երբեմն ունեցել են փառաւոր անցեալը, իր բոլոր յատկութեամբ, ուրեմն և պատմական ազգ են: Ունեցել են աշխարհաշէն թաղաւորներ, հմուտ գորականներ, քաջասիրտ զինուորներ, աշխուտաւոր երկրագործներ, հարուստ և բանուկ վաճառականութիւն: Այս ամենը յիշատակարաններ են, որոնցով հայերը կարող են պատմական ազգ լինել: Վեհափառ Կաթողիկոսը հայերի ներկայ դառն դրութիւնը վերաբերեց տգիտութեան կործանիչ հետեանքներին: Իշխանների և եկեղեցականների տգիտութիւնը, ասաց Նորին Օծուկեանը, և նոցա անհետաւորութիւնը հայերին հասցրին ներկայ դառն հանգամանքներին: Տգիտութիւնը, ասաց նա, մեր ընտանի թշնամին է. և այս թշնամուց ազատվելու համար պէտք է աշխատենք աննպատակ չապրովութիւնների համար ծախսած գումարները գործ դնել մեր որդւոց և աղջկանց բարոյական և մտաւոր զարգացման համար: Պատրաստենք նոցանից բարոյական, առաքինի, ազգասէր, մարդասէր և աստուածապաշտ մարդիկ: Այն ժամանակ հայերը իրանց ընկած և խեղճ դրութիւնից ազատվելով կը յայտնվեն աշխարհին իբրեւ կարեկցութեան արժանի մարդիկ և կը միջնորդեն նոցա մատուցած օժանդակութիւններով: Նորին Վեհափառութիւնը իր ատենաբանութեան մէջ յայտնեց, որ նա վաղուց զգացել է ուսման կարեւորութիւնը, և ուր զգել է իբրեւ պաշտօնական անձն, աշխատել է հաստատել և բանալ երկուսի զարդերը: Եւ Նորին Օծուկեան բաղաւոր համարեց իրան որ կարողացաւ իր հայրապետական իշխանութեան ժամանակ Ռուսաստանում հարիւրաւոր զարդեր բանալ թէ իր անմիջական ներգործութեամբ, թէ բարեխան առաջնորդների և յաջորդների և թէ անխնայ հոգաբարձուների նսկողութեամբ: Ապա յիշելով հեմարանի բացման ժամանակաշրջանները, զոհացողական մաղթանք ուղղեց զէպի նախախնամութիւնը, որ տունից միջոց իր նպատակին

հասնելու և իւրակաւոյց հեմարանի սանիկների երեսպալիքը ընդունելու, որոց բարոյական և մտաւոր զարգացման մասին անխաղճ գեր. Վարդէլ սրբազան արքեպիսկոպոսին, իսկ ինքն օրհնելով հեմարանի վարչութեանը, աշակերտներին և ներկայ բազմութեանը. վերջապէս իր խօսքը: Կեր. Վարդէլ սրբազան արքեպիսկոպոսը սկսեց իր ձառը նորանով, որ թէպէտ Արարատի լեռներում և Վաղարշապատի նահանգում թնդանօթների ձայնը բարեգուշակ հանգամանքների նշան չէ, այնու ամենայնիւ ներկայ եղողների բոլորի սրբերը թնդում են հոգեզմայլ ուրախութեամբ: Այս բոլորովին հակալիր զգացմանքների առթիւն է Վերքեան հեմարանի բացման երրորդ տարեդարձի հանդիսակատարութիւնը: Աշակերտների առաջադիմութեան համար ընդհանրապէս դո՛ւտ թիւին յայտնեց և ասաց թէ գործի աշղո սկզբնաւորութիւնը կէս վախճանի նշանակութիւնն ունի: Վաստի Վերքեան հեմարանի աշղո սկզբնաւորութիւնը առհաւառեցայ է նորա նպատակի հասնելու: Վախճանին: Նա աշակերտների առաջադիմութեան գլխաւոր պատճառը համարեց նոցա ընդունակութիւնը և փնտրելով թիւնը և նոյնպէս ուսուցիչների մանկավարժական հմտութիւնը, որոնք իրանց գիտութիւնը աւարտել են եւրօպական զանազան առաջնապարզ համալսարաններում: Սրբազանի ձառից իմացանք որ այս տարի բացվելու է հինգերորդ դասարանը զարդական չըջանի: Աւերմն մնաց երկու տարի որ աշակերտները աւարտելով հեմարանի ուսումը, պատաւաւոր վկայականը ձեռքերին դիմեն Եւրօպա կատարելագործվելու և այնուհետ հայրենի ուսումնաբանական գործին նուիրվելու: Սրբազան ճառասուր յայտնեց զարձեալ որ Վեհ. Կաթողիկոսի հրամանով այս տարի չորրորդ դաստան աշակերտները գնացին հայրենիք թէ Ֆիլիսթայի կաղուղիվելու, թէ զէպի ծաղք և ազգականները ունեցած կարօտը լրացնելու և թէ իրանց ստացած հմտութեամբ հեմարանի վարկը բարձրացնելու: Սրբազանը յայտնեց որ այժմ հեմարանում կան հարիւր և ասուս և հինգ աշակերտներ և ցանկութիւն յայտնեց, որ հեմարանը այնքան ընդարձակվէր որ գոնէ երկու հարիւր աշակերտ պարունակէր, որով այնքան ուսման կարօտ պատանիներ չէին գնալ տեղի անձկութեան պատճառով՝ որոնցից երեւումը հազիւ ընդունվեցան: Հաւոր վերջացաւ զանազան բարեմաղթութիւններով, որին հետեւեց երգ. յետոյ մի ուղերձ աշակերտների կողմից, զարձեալ մի երգ և հանդէսը վերջացաւ: Վեհափառ Կաթողիկոսը ուղղորդեց զէպի վեհարանը, իր կառութիւնը պատճառ բերելով, իսկ հանդիսականները բարձրացան հեմարանի վերին յարկը, ուր պիտի տեսնէին աշակերտների նկարները: Ապա հասարակաց սեղանատան մէջ հիւրասիրվեցան բազմաթիւ պատաւաւոր մարդիկ Երեւանից և վաղարշապատից եկած:

Հացկերպով ժամանակ գեր. Կղազար սրբազան արքեպիսկոպոսը ի պատիւ Օգոստոսափառ Կայսեր, Վեհափառ Կաթողիկոսի և այլոց կենաց բաժանելու առաջարկեց: Հացկերպով վերջանալով, վերջացաւ և հանդէսը. երեկոյան սովորական հրաւառութիւն չը կար:

Թէ իւրաքանչիւր որ ինչ համոզում և ինչ զգացում ընդունեց, այդ իւրեան է գիտելի: Ի հարկէ կան մարդիկ որոնք սովորութիւն ունեն լուկողները նկատելու, իսկ վատերի վրա ներդրութեամբ նայելու: Կան նաև այնպիսիք որոնց համար վատ կողմերն են նկատելի ընդհանրապէս, իսկ լաւերը համարվում են բացառութիւն, ուրեմն և վատ զարգաւոր են կազմում:

Մ. Գ. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

ՍՈՒՐԱՄԻ գինուորական-ժամանակաւոր № 34 հիւանդանոցի գլխաւոր բժիշկ պ. Սմոլեւսկի հաղորդում է մեզ որ մեր յաղգիրը ստացվում է հիւանդանոցում և որ այնտեղ եղած հիւանդ ու վիրաւորված հայերը ուրախութեամբ են կարգում «Մշակը»:

ԲԱԳՈՒՅ ցրում են մեզ որ սեպտեմբերի 28-ին Մարգարիտական Բնկերութեան խորհրդի ժողովը օրագիր կապանելով հրաժարեցրեց Խորէն վարդապետ Ստեփանէին բնկերութեան ուսումնաբանի տեւչութիւնից:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ մի նամակ ստացանք Ա. Տ. Յ. պարոնից որ կամենում է մեզ հաւատացնել որ

Թ. Ի. Գ. Ի. Բ. 1877.